## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 02

16. մայիսի 2017թ. կնքված Ն ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-5 պետական գնման պայմանագրի
Փոփոխություն N 1

*ք. Հրազդան* *„19 դեկտեմբերի 2017թ.*

<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Լ.Պետրոսյանի, որը գործում է <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ**-ն, ի դեմս Ընկերության **տնօրեն Գ. Նիկողոսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 16 մայիսի 2017թ. կնքված Ն ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-5 պետական գնման պայմանագրի 8.4 կետը և Գնումների գործընթացի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության 10 փետրվարի 2011 թվականի N168-Ն որոշումը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը ֆիքսեցին, որ Բյուրեղավանի համայնքի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների համար նախատեսված 23700000 (քսաներեք միլիոն յոթ հարյուր հազար) դրամից մինչև 19 դեկտեմբերի 2017թ-ը. որպես կատարողական ներկայացվել է 13938767 (տասներեք միլիոն ինը հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր վաթսունյոթ)դրամ և համաձայն 16 մայիսի 2017թ. կնքված Ն ԿՈՏ-ԲԸՀԱՇՁԲ-2017/02-5 պետական գնման պայմանագրի 4.6 կետի վճարվել է 13241828 (տասներեք միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր քսանութ)դրամ ենթակա է կատարման 9761233 (ինը միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր երեսուներեք) դրամի աշխատանքներ, որից նախատեսվում է կանխավճար 9273172 (ինը միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հարյուր յոթանասուներկու) դրամ

1.2 9273172 (ինը միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հարյուր յոթանասուներկու) դրամ կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժան մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| <<ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Կենտրոն վարչական շենք>> | <<ՆիկԴավ Գրուպ>> ԲԲԸ |
| ՀՀ <<900001059444>> | ք.Երևան Շիրակի 82 |
| ՀՎՀՀ 03014577 | Հ/Հ 20512201069-1001 |
| ------------------------------ | <<Ինեկոբանկ>> ՓԲԸ Տիգրան Մեծ մ/ճ |
| (ստորագրություն) | ՀՎՀՀ 01829142 |
| Կ.Տ | (ստորագրություն) |
| | Կ.Տ |